Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոցի կաթսայատան վերակառուցման (վերազինման) աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 05.02.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ա. Գրիգորյան
Ֆ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 15.01.2019թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Գրանտշին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, ինչը չի գերազանցում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված շեմը և հետևաբար չի սահմանափակում Մասնակցի մասնակցության իրավունքը, իսկ <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 15.01.2019թ. ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (17.01.2019թ. դրությամբ) ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) 5 և 5.2 հավելվածները հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

2) 5.2 հավելվածում հստակ նշված չեն հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձը (տարիներով) և կատարած աշխատանքը:

3) Վահրամ Մասլենի Մինասյանի համաձայնագրում նշված է, որ վերջինս տալիս է իր համաձայնությունը <<Գրանտշին>> ՍՊԸ-ի կազմում մասնակցելու որպես աշխղեկ, սակայն նշված չէ, թե որ աշխատանքների մասով, իսկ անձնագրի վավերականության ժամկետի ավարտը 12.05.2016թ. է:

4) Ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում բացակայում են պայմանագրի 1.1 կետում նշված ծավալաթերթ-նախահաշիվը, 1.3 կետում նշված օրացուցային գրաֆիկը և 5.3 կետում նշված վճարման ժամանակացույցը:

գ) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունների մասին 01.02.2019թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (04.02.2019թ. դրությամբ) շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Գրանտշին>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամներ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան